ՋԻԳԱՐՈՎ ՊԱԽՐԵՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի քյասիբ մարթ ու կնիկ են ըլըմ։ Դրանք սրա նրա տանը նոքարութին են անըմ, օրեն ըշխատածով իրանց գլուխը պիրմ։ Կնիկը պատճառավոր ա դառնըմ, նաչարի մարթը աղի հմար փետ կտրելիս՝ ծառը վրեն վեր ա ընգնըմ, մեռնըմ։ Կնիկը մնըմ ա մենակ։ Խտոր ընգնելու վախտը տենըմ ա, ոչով իրանց դուռը բաց չի անըմ, հլե տիե գնըմ ա ծառի տակին նստըմ ա՝ լաց ըլըմ։ Ցավը բռնըմ ա, ըտի էվետ ազատվըմ ա։ Հմա նաչարի նութը կտրած ա ըլըմ, ըրեխին ծիծ ա տալի, հմա կաթը ո՞րդիանց գա։
Քորփեն որ լաց ա ըլըմ հա, մերը մխկտալով ասըմ ա.—
Նանա՛, նանա՛ Օրսագուլ,
Պախրեն կգա ծիծ կտա,
Ջիգար չունենա՝ քիչ կտա,
Քամին կգա ժաժ կտա,
Մանգրատերևը փափկոց կլի։
Լենատերևը ծածկոց կլի։
Էն եղատարը տիե երքըմ ա ու հետն էլ լաց ըլըմ։ Տիե որ ոչով տեր ու տիրական չի դուս գալիս, իրան նութն էլ կտրըմ ա, ֆոքին տալիս ա։ Եդո ըղորթ պախրեն գալիս ա ծիծ ա տալի, մանդրը տերևնին էլ տակին փափկոց են ըլըմ— լենտերևնին էլ ծածկոց են դառնըմ, քամին էլ ըրորըմ ա։
Էդ վախտը մի թաքավոր իրա զորքերով էկած ա ըլըմ էդ ծմակը ֆորսի։ Պախրին տենըմ են թե չէ, տալիս են սպանըմ։ Որ գալիս են տենըմ պախրի ծիծն էդ ըրեխի բերնըմը, ըրեխի մերն էլ կոխկին ֆոքին տված ա, կուռներուն թիլանըմ ա, մնըմ են հուշ էլած։
Ասըմ են.— Պախրեն մարթկերանցից ջիգարով ա։